ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Տարեկան հաշվետվություն Գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրեր 2020

ԵՐԵՎԱՆ 2021



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 4

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 5

1.1 ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 5

1.2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ 5

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ 7

2.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ 7

2.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 9

2.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 11

2.4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ 13

2.5. ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ 15

2.6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂՈՂԻ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՄՇԱԿՎՈՂ ԻՆՏԵՆՍԻՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ և ՀԱՏԱՊՏՂԱՆՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 16

2.7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐԿՏԱՊԱՇՏՊԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ 18

2.8. ՓՈՔՐ և ՄԻՋԻՆ ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 19

2.9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 20

2.10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 21

2.11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ և ԱՅԾԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 22

2.12. ՓՈՔՐ և ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 23

2.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ 24

ՔԱՐՏԵԶ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ 26

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Կառավարության գյուղատնտեսական քաղաքականության առանցքը լինելու է գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը, պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, արդի տեխնոլոգիաների ներմուծումը, արտահանման ծավալների ավելացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված բոլոր սուբյեկտների՝ փոքր տնային տնտեսությունների, գյուղացիական կոոպերատիվների, վերամշակողների և արտահանողների եկամտաբերության բարձրացումը:

ՀՀ կառավարության ծրագիր

Առաջիկա տասը տարիների ընթացքում ունենալ շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ապրող երջանիկ և բարեկեցիկ գյուղական բնակչություն, բարձրորակ և մրցունակ գյուղատնտեսական ապրանք արտադրող փոքր ու միջին տնտեսավարողներ: Որակապես տարբերվող գյուղատնտեսության ստեղծմանը մասնակից ձեռնարկատիրական գործունեություն ծավալող բոլոր սուբյեկտներին Կառավարությունը կընձեռի միատեսակ պայմաններ, հավասար հնարավորություններ, արդար մրցակցային և կայուն միջավայր:

Գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն

1. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1.1 ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող օպերատիվ տվյալների ամփոփմամբ ստացված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներով տնտեսական ակտիվության մակարդակը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 92.5 %, գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը՝ 101.4 %: 2020 թվականի տվյալներով գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեջ ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1. 2020 թվականի օպերատիվ տվյալներով գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում

1.2 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսությունը Հայաստանի տնտեսության առանցքային ճյուղերից մեկն է և հասարակության կեցության հիմքը: Այն նշանակալի է ոչ միայն որպես ոլորտ, որից ստացվում է որոշակի ավելացված արժեք, այլև առաջին հերթին՝ որպես բնագավառ, որի որակի և զարգացման մակարդակից է կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական բնակավայրերի կենսամակարդակն ու զարգացման հնարավորությունները, մարդկանց առողջությունն ու անվտանգությունը, բնակության վայրն ու պայմանները, ինչպես նաև բնակչության կյանքի որակն ու տևողությունը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գյուղատնտեսությունը երկրի կենսագործունեության և տնտեսության կայունացման շարժիչ գործոններից մեկն է, ՀՀ կառավարության ջանքերը ևս ուղղված են այդ ոլորտում իրականացվող քաղաքականության խոչընդոտների վերացմանը, պետական աջակցության մեխանիզմների մշակմանն ու ի հայտ եկած ճգնաժամային ռիսկերի մեղմմանը:

Ներկայումս գյուղատնտեսության ոլորտում իրականացվում են մեկ տասնյակից ավել պետական աջակցության ծրագրեր, որոնց հիմնական նպատակը գյուղատնտեսությունում կապիտալ ներդրումների ծավալների ավելացումն է, արտադրական հզորությունների ընդլայնումը, արդիական տեխնոլոգիաների ներդրումն ու գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների կայունացումը: Հատկանշական է, որ 2018-2020 թվականներին գործողության մեջ դրվեցին նոր ծրագրեր, միաժամանակ գործող ծրագրերում իրականացվեցին բազմաթիվ փոփոխություններ, որոնց մեծ մասը նախատեսված էր տնտեսական նոր իրավիճակներում գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից՝ պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ըստ այդմ

գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունները ճշտգրտելու գործողություններ իրականացնելու համար:

2020 թվականին գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ագրարային քաղաքականությունը խարսխված է հետևյալ հիմնական փաստաթղթերի վրա՝

1. ՀՀ կառավարության ծրագիր (ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 8-ի N 65-Ա որոշում)
2. ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարություն (ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1886-Լ որոշում),
3. Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգը և միջոցառումների ծրագիրը (ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 23-ի N 68-Լ որոշում),
4. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառում (ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 356-Լ որոշում),
5. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսանչորսերորդ միջոցառում (ՀՀ կառավարության 2020 թվականի օգոստոսի 13-ի N 1355-Լ որոշում):

Տնտեսական նոր մարտահրավերներին դիմակայելու համար ՀՀ կառավարության կողմից մշակվեցին նոր միջոցառումներ՝ կորոնավիրուսի տընտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ և քսանչորսերորդ միջոցառումները, որոնք արդեն իսկ գործող գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերում ներառել են նոր առավել արտոնյալ պայմաններ, մասնավորապես, 0 % տոկոսադրույք և տարբեր տնտեսավարողների համար տարբերակված չափաքանակներով համաֆինանսավորման հնարավորություն:

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ և քսանչորսերորդ միջոցառումների շրջանակներում գյուղատնտեսությունում ներդրումների չափը կազմել է համապատասխանաբար 91.3 մլրդ դրամ և 19.6 մլրդ դրամ, իսկ պետության կողմից աջակցության չափը (երկու միջոցառումների շրջանակում)՝ շուրջ 3.9 մլրդ դրամ:

Արդյունքում 2020 թվականին գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության ծրագրերի շրջանակներում տնտեսությունում ներդրումների ծավալը կազմել է 101.0 մլրդ դրամ, որից միայն կապիտալ ներդրումների ծավալը՝ շուրջ 46.1 մլրդ դրամ:

Ստորև առավել մանրամասն ներկայացված են ՀՀ էկոնոմիկայի նախարարության համակարգմամբ գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական աջակցության ծրագրերը:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն է հանրապետության ագրոպարենային ոլորտում զբաղ-ված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման, վարկավորման պայմանների բարելավման միջոցով նպաստել տնտեսավարողներին մատչելի ֆինանսական ռեսուրսների ապահովմանը, կարողությունների ընդլայնմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը, գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակներում վարկերը տնտեսավարողներին հասանելի էին 0 % տոկոսադրույքով և տարբերակված չափաքանակներով համաֆինանսավորման հնարավորությամբ, միաժամանակ, ծրագրում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, ըստ որի տրամադրվող վարկերի առավելագույն շեմը ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման ու ավանդական այգու հիմնման համար բարձրացվել է մինչև 30 մլն դրամ, տավարաբուծության զարգացման համար՝ մինչև 50 մլն դրամ: Ավանդական այգու հիմնման համար ավելացվել են վարկերի մարման (մինչև 7 տարի) և արտոնյալ (մինչև 4 տարի) ժամկետները, միաժամանակ ֆիզիկական անձանց խոզաբուծության և թռչնաբուծության համար տրամադրվող վարկերի ժամկետը սահմանվել է 3 տարի, իսկ արտոնյալ ժամկետը՝ 12 ամիս: Գյուղատնտեսության ոլորտում գործունեության նպատակով ֆիզիկական անձանց տրամադրվել են նաև մինչև 1 մլն դրամի միկրովարկեր՝ 2 տարի մարման և մինչև 9 ամիս արտոնյալ ժամկետով:

2020 թվականին տրամադրվել է 36608 միավոր վարկ՝ 63.4 մլրդ դրամ գումարի չափով: Նախորդ տարվա համեմատ ծրագրից օգտվողների թիվը ավելացել է 4.1 անգամ, իսկ տրամադրված վարկերի գումարը՝ 1.8 անգամ: Ծրագրի շրջանակում 2018-2020 թվականներին տրամադրված վարկերի ծավալը, քանակն ու բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 2-ում, 3-ում և 4-ում:



Գծապատկեր 2. 2018-2020թթ.-ին տրամադրված վարկերի ծավալը, մլն դրամ



Գծապատկեր 3. 2018-2020թթ.-ին տրամադրված վարկերի քանակ, հատ



Գծապատկեր 4. Վարկերի քանակը և գումարն՝ ըստ մարզերի

Ցուցանիշների վերլուծության արդյունքներից պարզ է դառնում, որ ծրագրից առավել շատ օգտվել են Արմավիրի, Արարատի, Շիրակի և Գեղարքունիքի մարզերի գյուղատնտեսությունում տնտեսավարողները: Ներդրումների 52 %-ը իրականացվել է ոլորտի բուսաբուծության ճյուղում, իսկ 48 %-ը՝ անասնաբուծության (տես գծապատկեր 5), կատարված ներդրումների հիմնական ուղղությունները ներկայացված են գծապատկեր 6-ում:



Գծապատկեր 5.Վարկերի բաշխվածությունն՝ ըստ ճյուղերի



Գծապատկեր 6. Վարկերի բաշխվածությունն՝ ըստ ուղղությունների

2.2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակը՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես լիզինգային մեխանիզմների կիրառմամբ գյուղատնտեսական տեխնիկայի մատակարարումն է, արդյունքում՝ գյուղատնտեսական հողատեսքերի արդյունավետ օգտագործման և ապրանքային արտադրության կազմակերպման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակում տրամադրվող լիզինգի համար մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը սահմանվել էր 0 % տոկոսադրույք, 3-10 տարի մարման ժամկետ: Գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերման համար նախատեսվել է համաֆինանսավորման հնարավորություն՝ 10 %-ի չափով, կանխավճարի համաֆինանսավորման դեպքում՝ ոչ ավել քան 10 մլն դրամը:

Ծրագրով 2020 թվականին 390 շահառուի տրամադրվել է 573 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 275 միավոր տրակտոր, 3 միավոր կոմբայն, լիզինգի գումարը կազմել է 2.7 մլրդ դրամ, սուբսիդավորման գումարը՝ 254.5 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ լիզինգառուների թիվը ավելացել է 1,8 անգամ, իսկ տրամադրված գյուղատնտեսական տեխնիկայի թիվը՝ 1.6 անգամ: Ծրագրի շրջանակում լիզինգառուների թիվը, գյուղատնտեսական տեխնիկայի քանակը և բաշխվածությունը ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 7-ում, 8-ում և 9-ում:



Գծապատկեր 7. 2018-2020թթ.-ին ծրագրի շրջանակում լիզինգառուների թիվն ըստ ամիսների



Գծապատկեր 8. 2018-2020թթ.-ին ձեռք բերված գյուղատնտեսական տեխնիկայի քանակ, հատ



Գծապատկեր 9. 2020թ.-ին ձեռք բերված տեխնիկայի քանակն՝ ըստ մարզերի, հատ

2.3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն ագրոպարենային ոլորտի տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես՝ ֆինանսական վարձակալության (լիզինգի) մեխանիզմների կիրառմամբ սարքավորումների մատակարարումն է, որը նախադրյալներ կստեղծի գյուղատնտեսական ծագման մթերքների և դրանց վերամշակումից ստացված արտադրանքի ծավալների ավելացման, միջազգային չափորոշիչներին համապատասխան որակական և անվտանգության պահանջների ապահովման, մրցունակության բարձրացման, արտահանման ծավալների ավելացման, ինչպես նաև ներկրվող արտադրանքը տեղական արտադրանքով փոխարինելու համար:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Ծրագրի արդյունավետությունը բարելավելու նպատակով 2020 թվականին կատարված լրացումներով ծրագրի ընդգրկման շրջանակն ավելացվել է շարժական և շարժական մոդուլային սպանդանոցներով, ինչպես նաև սպանդանոցային ծառայություն մատուցողի կողմից ձեռք բերվող մսեղիքի տեղափոխման տրանսպորտային միջոցներով, ընդ որում՝ եթե սպանդանոցը, ջերմատունը, սառնարանային կամ գյուղատնտեսական նշանակության պահեստային տնտեսությունը կառուցվում և մոնտաժվում է կապալառուի միջոցով՝ ֆինանսական կառույցի, կապալառուի և շահառուի միջև կնքված եռակողմ պայմանագրի հիման վրա, ապա ամբողջական սպանդանոցը (այդ թվում՝ հողամասը, որի վրա կառուցված է սպանդանոցը)՝ համալրված անհրաժեշտ սարքավորումներով դիտարկվում է որպես լիզինգի առարկա: Բացի այդ Էկոնոմիկայի նախարարության կողմից քարտեզագրված սպանդանոցային ցանցի թիրախավորված համայնքներում շարժական և/կամ շարժական մոդուլային սպանդանոցներ տեղակայելու նպատակով ձեռքբերվող սարքավորումների լիզինգի համար անհրաժեշտ 20 տոկոս կանխավճարի 75 տոկոսը, բայց ոչ ավելի, քան 4.8 մլն դրամը սուբսիդավորվում է: Միաժամանակ, Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակում տրամադրվող լիզինգի համար մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը սահմանվել էր 0 % տոկոսադրույք: Ագրոպարենային ոլորտի սարքավորումների ձեռքբերման համար նախատեսվել էր նաև համաֆինանսավորման հնարավորություն՝ 10 %-ի չափով, կանխավճարի համաֆինանսավորման դեպքում՝ ոչ ավել քան 10 մլն դրամը:

<u>Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսանչորսերորդ միջոցառում</u>

2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը գյուղատնտեսական հումքի վերամշակում իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի պայմաններին համապատասխան լիզինգը տրամադրվել է հետևյալ պայմաններով՝ 0 % տոկոսադրույքով, լիզինգով ձեռք բերվող սարքավորումների և հիմնական միջոց հաշվառվող հումքի և արտադրանքի պահման մետաղյա տարողությունների ու գինեգործության ոլորտում օգտագործվող կաղնեփայտե տարաների արժեքների հանրագումարը չպետք է գերազանցի 1.0 մլրդ դրամը:

Ծրագրով 2020 թվականին հաստատվել է 186 հայտ 6.3 մլրդ դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 217.9 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում ընթացիկ տարում ձեռք է բերվել 377 միավոր սարքավորում: Նախորդ տարվա համեմատ լիզինգառուների թիվը ավելացել է 1,9 անգամ, իսկ լիզինգի գումարը՝ 2.4 անգամ: Տրամադրված լիզինգի քանակի և գումարի բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է գծապատկերի 10-ում և 11-ում:



Գծապատկեր 10. 2018-2020թթ.-ին ծրագրի շրջանակում լիզինգառուների թիվն ըստ ամիսների



Գծապատկեր 11. 2020թ.-ին ծրագրի շրջանակում տրամադրված լիզինգի քանակը և գումարն՝ ըստ մարզերի

2.4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ (ԳՆՈՒՄՆԵՐԻ) ՆՊԱՏԱԿՈՎ ԱԳՐՈՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության ոլորտում զբաղված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Ծրագրի արդյունավետությունը բարելավելու նպատակով 2020 թվականին՝ ծրագրի շրջանակներում վարկերի դասակարգման ուղղությունը լրացվել է նոր՝ սպանդանոցների կողմից գյուղատնտեսական կենդանիների գնումների և պտուղբանջարեղենի գնումներ ու պտուղբանջարեղենի պահածոների արտադրության մեջ օգտագործվող ապակե բանկաների, կափարիչների, ասեպտիկ պարկերի և դրանց տարաների ձեռք բերման ուղղություններով, ընդ որում՝ սպանդանոցներին հատկացվող վարկը հաշվարկվում է սպանդանոցի մակերեսով՝ 15 մ^2 մակերեսի համար ոչ ավել, քան 2.0 մլն դրամ հաշվարկով, իսկ շարժական սպանդանոցի համար՝ ոչ ավել, քան 5.0 մլն դրամ: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 356-Լ որոշմամբ հաստատված Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակում մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը տրամադրվող վարկերը տնտեսավարողներին հասանելի էին 0 % տոկոսադրույքով: Ծրագրի շրջանակում ավելացել է նաև տրամադրվող վարկի գումարը՝ մինչև 1.8 մլրդ դրամ:

<u>Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման քսանչորսերորդ միջոցառում</u>

2020 թվականին խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին 2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը տրամադրվող վարկերը տրամադրվել են 0 % տոկոսադրույքով, յուրաքանչյուր վարկառուին տրամադրվող վարկերի մայր գումարի մնացորդը չէր կարող գերազանցել 3.0 մլրդ դրամը, մարման առավելագույն ժամկետը՝ 24 ամիս, արտոնյալ ժամկետը հաշվարկվում էր առնվազն 3 ամիս, բայց ոչ ավել, քան 6 ամիս: Հնարավորություն է տրվել ծրագրին մասնակից ֆինանսական կառույցների և շահառուների փոխադարձ համաձայնությամբ ծրագրի շրջանակներում խաղողի վերամշակմամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներին 2019 թվականին տրամադրված վարկերի մայր գումարի մարման համար սահմանված 12 ամիս ժամկետն երկարաձգել մինչև 15 ամիս:

2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820 ծածկագրին դասվող ապրանքների (կոնյակի սպիրտ և շշալցված կոնյակ) 100 հազար (100 տոկոսանոց սպիրտի հաշվարկով) լիտրը գերազանցող չափով իրացում, այդ թվում՝ արտահանում ունեցող տնտեսավարող սուբյեկտի կողմից վճարված «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լրացուցիչ 100 դրամ և/կամ 25 դրամ պետական տուրքը սահմանված կարգով վերադարձվել է տնտեսավարող սուբյեկտին:

Արդյունքում ծրագրի շրջանակում 2020 թվականին հաստատվել է 181 հայտ՝ 22.3 մլրդ դրամի չափով: Հաստատված հայտերի շրջանակներում գյուղացիական տնտեսությունների հետ կնքվել է բերքի գնման 16017 պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 703.4 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ծրագրից օգտվողների թիվը ավելացել է 2 անգամ, իսկ տրամադրված վարկերի գումարը՝ 2.3 անգամ: Տրամադրված վարկերի քանակի և գումարի բաշխվածությունն ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 12- ում և 13-ում:



Գծապատկեր 12. 2018-2020թթ.-ին ծրագրի շրջանակում վարկառուների թիվն ըստ ամիսների



Գծապատկեր 13. 2020թ.-ին ծրագրի շրջանակում տրամադրված վարկերի քանակը և գումարը՝ ըստ մարզերի

2.5. ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի իրականացման նպատակը գյուղատնտեսական հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խթանումն է, որի շրջանակում կաթիլային ոռոգման և անձրևացման համակարգերի ներդրման համար պետական աջակցություն է ցուցաբերվում գյուղատնտեսական մշակաբույսերի մշակությամբ զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման կամ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով՝ ըստ տնտեսավարողի հայեցողության:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Վարկային բաղադրիչ

Ծրագրի շրջանակում 2020 թվականին տրամադրվել է 322.5 մլն դրամ գումարի 12 միավոր վարկ, 229.2 հա հողատարածքում որոգման արդիական համակարգերի ներդրման համար, սուբսիդավորման գումարը կազմել է 52.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ ոռոգման արդիական համակարգերով ներդրված տարածքների մակերեսը ավելացել է շուրջ 1.1 անգամ:

Փոխհատուցման բաղադրիչ

Ծրագրի շրջանակում 2020 թվականին տրամադրվել է 2.4 մլն դրամ գումարի 2 փոխհատուցում, 10.2 հա հողատարածքում որոգման արդիական համակարգերի ներդրման համար:

Ծրագրերի երկու բաղադրիչների արդյունքային ցուցանիշները ներկայացված են գծապատկեր 14-ում և 15-ում:



Գծապատկեր 14. 2018-2020թթ.-ին ծրագրի շահառուների թիվն ու ներդրված ոռոգման արդիական համակարգերի տարածքները



Գծապատկեր 15. Ծրագրի շրջանակներում ներդրված ոռոգման արդիական համակարգերի տարածքներն ըստ մարզերի, հա

2.6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂՈՂԻ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՄՇԱԿՎՈՂ ԻՆՏԵՆՍԻՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ և ՀԱՏԱՊՏՂԱՆՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է այգետնկումների խթանմամբ հանրապետությունում պտղաբուծության և խաղողագործության զարգացումը, խաղողի, պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացումը, պտուղների և հատապտուղների ներմուծման փոխարինումը տեղական արտադրանքով և արտահանման ծավալների ավելացումը:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Վարկային բաղադրիչ

Ծրագրի շրջանակում 2020 թվականին տրամադրվել է 5.4 մլրդ դրամ գումարի 46 միավոր վարկ, 494.4 հա այգեհիմնման համար, սուբսիդավորման գումարը կազմել է 187.3 մլն դրամ: Նախորդ տարվա համեմատ շահառուների թիվն ավելացել է շուրջ 3 անգամ, իսկ ինտենսիվ այգիների մակերեսը՝ 9.7 անգամ:

Փոխհատուցման բաղադրիչ

Ծրագրի շրջանակում 2020 թվականին տրամադրվել է 104.7 մլն դրամ գումարի 7 փոխհատուցում, 24.2 հա հողատարածքում այգեհիմնման համար:

Ծրագրի շրջանակում շահառուների թիվն ու հիմնված այգու տարածքներն ըստ տարիների, ներդրված այգիների մակերեսն ըստ մարզերի և մշակաբույսերի ներկայացված են գծապատկերներ 16, 17, 18-ում:



Գծապատկեր 16. 2018-2020թթ.-ին ծրագրի շահառուների թիվն ու հիմնված այգու տարածքները



Գծապատկեր 17. 2020թ.-ին հիմնված ինտենսիվ այգիների տարածքներն՝ ըստ մարզերի, հա



Գծապատկեր 18. 2020թ.-ին հիմնված ինտենսիվ այգիների տարածքներն՝ ըստ մշակաբույսերի, հա

2.7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐԿՏԱՊԱՇՏՊԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն է՝ գյուղատնտեսության ոլորտի կորուստների ռիսկերը մեղմելու նպատակով պետական աջակցության միջոցով գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից կարկտապաշտպան ցանցերի ներդրման խթանումը, որը կհանգեցնի պտղատու և խաղողի այգիների կարկուտից արդյունավետ պաշտպանությանը, տնտեսավարողների եկամուտների աճին ու այգեգործության արդյունավետության բարձրացմանը:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Ծրագրի շրջանակում 2020 թվականին 2 շահառուի (Արագածոտնի և Կոտայքի մարզեր) տրամադրվել է 35.6 մլն դրամ արժեքով վարկ՝ 14.5 հա պտղատու այգում կարկտապաշտպան ցանցային համակարգի ներդրման համար: 2020 թվականին կարկտապաշտպան ցանցային համակարգով այգիների մակերեսը ավելացել է շուրջ 14 հա-ով: Ծրագրի շրջանակում կարկտապաշտպան ցանցային համակարգերի ներդրման տարածքների չափերը ներկայացված է գծապատկեր 19-ում:



Գծապատկեր 19. 2018-2020թթ.-ին ներդրված կարկտապաշտպան ցանցային համակարգերն՝ ըստ տարածքների, հա

2.8. ՓՈՔՐ և ՄԻՋԻՆ ՋԵՐՄԱՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է փոքր և միջին ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության միջոցով ավելացնել ջերմատնային տնտեսությունների մակերեսն ու արտադրության ծավալները, բարձրացնել արտադրանքի մրցունակության մակարդակը, նպաստել գյուղատնտեսությունում տնտեսավարողների եկամուտների ավելացմանը:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Ծրագիրը մեկնարկել է 2020 թվականին, մեկնարկից սկսած 168 քաղաքացի դիմել է մասնակցության համար, 82 քաղաքացի մասնակցել է ջերմատնային տնտեսությունների վարման դասընթացներին և ստացել հավաստագիր, 12 շահառուի հետ կնքվել է պայմանագիր և տարեվերջին տրամադրվել 2 փոխհատուցում (Արագածոտնի և Կոտայքի մարզեր): Ծրագրի շրջանակում շահառուների թվի բաշխվածությունն ըստ մոդելների և մարզերի ներկայացված է գծապատկեր 20-ում և 21-ում:



Գծապատկեր 20. Շահառուների թիվը՝ ըստ ջերմատան մոդելների



Գծապատկեր 21. Ներկայացված դիմումների քանակը՝ ըստ մարզերի

12	2	57,0
պայմանագիր	փոխհատուցում	մլն դրամ

2.9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՇՆԱՆԱՑԱՆ ՑՈՐԵՆԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրով նախատեսվում է աշնանացան ցորենի սերմերի գնի մասնակի սուբսիդավորման կամ փոխհատուցման միջոցով՝ նպաստել ագրոտնտեսական բարձր ցուցանիշներով օժտված սերմերի հասանելիության ապահովմանը, բերքատվության բարձրացմանը, արդյունքում տեղական աշնանացան ցորենի ծավալների և տնտեսավարող սուբյեկտների եկամուտների ավելացմանը:



<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Ներկայացված պայմանագրերի քանակ → **2751**

4184 տոննա վաճառված սերմացու — **292.9** մլն դրամ փոխհատուցման գումար

2.10. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակը ՀՀ-ում տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին մատչելի պայմաններով, մասնավորապես, վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է, ինչը հնարավորություն կընձեռի անհայտ ծագումնաբանությամբ, վերարտադրության համար ոչ պիտանի, ցածր մթերատու կենդանիների փոխարեն նախիրները համալրել արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված տոհմային ԽԵԿ-ով, զարգացնել տոհմային գործը, միջցեղային տրամախաչումների միջոցով բարելավել տեղական կենդանիների մթերատվությունը, ավելացնել կաթի և մսի արտադրության ծավալները, նվազեցնել արտադրվող կաթի և մսի ինքնարժեքը՝ ներկրվող համանման արտադրանքի նկատմամբ այն դարձնելով առավել մրցունակ:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Ծրագրի շրջանակներում 2020 թվականին ձեռք է բերվել 391 գլուխ կենդանի՝ 345.0 մլն դրամ արժեքով, սուբսիդավորման գումարը կազմել է 51.5 մլն դրամ: Ծրագրի շրջանակում ձեռք բերված կենդանիների գլխաքանակն ըստ տարիների և մարզերի ներկայացված է գծապատկեր 22-ում և 23-ում:



Գծապատկեր 22. 2019-2020թթ.-ին ձեռք բերված կենդանիների գլխաքանակը, գլուխ



Գծապատկեր 23. 2020թ.-ին ձեռքբերված տոհմային կենդանիների գլխաքանակն՝ ըստ մարզերի, գլուխ

2.11. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ և ԱՅԾԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է՝ մատչելի վարկավորման կամ ծախսերի մասնակի փոխհատուցման միջոցով հանրապետությունում ոչխարաբուծության և այծաբուծության ճյուղերի զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, բարձրարժեք տոհմային ոչխարների և այծերի ձեռքբերման և բարձր մթերատու հոտերի ձևավորման խրախուսումը, բուծվող ցեղերի կատարելագործումը, տոհմային գործի զարգացումը արտադրատնտեսական արժեքավոր հատկանիշներով օժտված մաքրացեղ և տրամախաչումների միջոցով ստացված խառնացեղ կենդանիների գլխաքանակի ավելացումը, ինչպես նաև ոչխարաբուծական և այծաբուծական արտադրանքի արտադրության և արտահանման ծավալների ավելացումը:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

Ծրագրի շրջանակներում սուբսիդավորման բաղադրիչով ձեռք է բերվել 652 գլուխ կենդանի, տրամադրվել է 231.0 մլն. դրամ գումարով 4 միավոր վարկ, սուբսիդավորման գումարը կազմել է 22.2 մլն դրամ: Իսկ ծրագրի փոխհատուցման բաղադրիչով 1 շահառուի 20 գլուխ կենդանի ձեռք բերելու համար տրամադրվել է 2.07մլն դրամ փոխհատուցում: Ծրագրի շրջանակում ձեռք բերված կենդանիների գլխաքանակն ըստ տարիների և մարզերի ներկայացված է գծապատկեր 24-ում և 25-ում:



Գծապատկեր 24. 2019-2020թթ.-ին շառուների թիվը և ձեռք բերված կենդանիների գլխաքանակը



Գծապատկեր 25. 2020թ.-ին ձեռք բերված տոհմային կենդանիների գլխաքանակն՝ ըստ մարզերի, գլուխ

2.12. ՓՈՔՐ և ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի հիմնական նպատակն է բարելավել կենդանիների պահվածքի պայմանները՝ արդյունքում բարձրացնել կենդանիների մթերատվության ցուցանիշները:

2020 թվականին կատարած աշխատանքներ

Ծրագրի շրջանակում 2020 թվականին իրականացվել է 167 տեղազննություն, 86 քաղաքացու տրամադրվել է հավաստագիր, կնքվել է 35 պայմանագիր և շահագործման է հանձնվել 13 անասնաշենք: Ծրագրի շրջանակում տրամադրված փոխհատուցումների քանակը, գումարը, բաշխվածությունն ըստ մոդելների և մարզերի ներկայացված է գծապատկեր 26-ում, 27-ում և 28-ում:



Գծապատկեր 26. 2019-2020թթ.-ին տրամադրված փոխհատուցումների քանակը և գումարը



Գծապատկեր 27. Շահագործման հանձնված անասնաշենքերն՝ ըստ մոդելների



Գծապատկեր 28. Շահագործման հանձնված անասնաշենքերն՝ ըստ մարզերի, հատ

2.13. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի նպատակն է գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը և ամբողջական համակարգի ներդրման արդյունքում գյուղատնտեսության ոլորտում ռիսկերի կառավարմանն ուղղված քաղաքականության իրականացումը:

<u>2020 թվականին կատարած աշխատանքներ</u>

2020 թվականի մայիսի 15-ին ավարտվել է 2020 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրական պայմանագրերի կնքման ժամկետը: Արդյունքում Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալության կողմից տրամադրած տեղեկատվության համաձայն ապահովագրական ընկերությունների կողմից փաստացի վաճառվել է 1546 ապահովագրական պայմանագիր, որոնց հաշվեգրված ընդհանուր ապահովագրավճարների թիվը կազմում է շուրջ 130,5 մլն դրամ, իսկ սուբսիդավորված գումարը՝ 69.0 մլն դրամ: Կնքված պայմանագրերի արդյունքում ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է շուրջ 2500 հա, որի բաշխվածությունն ըստ մարզերի և մշակաբույսերի ներկայացված է գծապատկեր 29-ում և 30-ում:



Գծապատկեր 29. Ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսն՝ ըստ մարզերի, հա



Գծապատկեր 30. Ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսն՝ ըստ մշակաբույսերի, հա

2020 թվականին գյուղատնտեսությունում ապահովագրական պատահարների հետևանքով ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 300 ապահովագրական հատուցում՝ 151.3 մլն դրամի չափով: 2020 թվականին ապահովագրական հատուցումների քանակը և գումարն՝ ըստ մարզերի ներկայացված է գծապատկեր 31-ում:



Գծապատկեր 31. 2020 թվականին ապահովագրական հատուցումների քանակը և գումարն՝ ըստ մարզերի

ՔԱՐՏԵԶ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Շիրակի մարզ
- 4227 միավոր վարկ՝ 6.3 մլրդ դրամ
- 2.4 հա ինտենսիվ այգի
- 3 խելացի անասնաշենք
- 31 գլուխ ԽԵԿ
- 52 գյուղատնտեսական տեխնիկա
- 44.6 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 66 մթերման պայմանագիր
- 205 ապահովագրական պայմանագիր

Լոռու մարզ
- 3526 միավոր վարկ՝ 4.4 մլրդ դրամ
- 5 հա ինտենսիվ այգի
- 2 խելացի անասնաշենք
- 117 գլուխ ԽԵԿ
- 33 գյուղատնտեսական տեխնիկա
- 17 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 69 մթերման պայմանագիր
- 182 ապահովագրական պայմանագիր

Տավուշի մարզ
- 2531 միավոր վարկ՝ 3.3 մլրդ դրամ
- 96 գլուխ ԽԵԿ
- 300 գլուխ ՄԵԿ
- 16 գյուղատնտեսական տեխնիկա
- 249 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 243 մթերման պայմանագիր
- 78 ապահովագրական պայմանագիր

Արագածոտնի մարզ
- 3746 միավոր վարկ՝ 6.4 մլրդ դրամ
- 150 հա ինտենսիվ այգի
- 1 հա կարկտապաշտպան ցանցային համակարգ
- 1 ջերմատուն
- 1 խելացի անասնաշենք
- 55 գյուղատնտեսական տեխնիկա
- 28.3 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 163 մթերման պայմանագիր
- 92 ապահովագրական պայմանագիր

Կոտայքի մարզ
- 3105 միավոր վարկ՝ 5.3 մլրդ դրամ
- 90.6 հա ինտենսիվ այգի
- 10 հա ոռոգման արդիական համակարգ
- 13.5 հա կարկտապաշտպան ցանցային համակարգ
- 1 ջերմատուն
- 2 խելացի անասնաշենք
- 75 գլուխ ԽԵԿ
- 85 գլուխ ՄԵԿ
- 42 գյուղատնտեսական տեխնիկա
- 1.3 մլրդ դրամի ագրոպարենային լիզինգ
- 46 մթերման պայմանագիր
- 49 ապահովագրական պայմանագիր

Գեղարքունիքի մարզ
- 4037 միավոր վարկ՝ 5.7 մլրդ դրամ
- 3.5 հա ինտենսիվ այգի
- 1 խելացի անասնաշենք
- 287 գլուխ ՄԵԿ
- 103 գյուղատնտեսական տեխնիկա
- 35.4 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 7 մթերման պայմանագիր
- 15 ապահովագրական պայամանագիր

Արմավիրի մարզ
- 5971 միավոր վարկ՝ 13.1 մլրդ դրամ
- 181.1 հա ինտենսիվ այգի
- 157.2 հա ոռոգման արդիական համակարգ
- 2 խելացի անասնաշենք
- 42 գլուխ ԽԵԿ
- 132 գյուղատնտեսական տեխնիկա
- 873.6 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 874 մթերման պայմանագիր
- 610 ապահովագրական պայմանագիր

Արարատի մարզ
- 6189 միավոր վարկ՝ 12.5 մլրդ դրամ
- 36.5 հա ինտենսիվ այգի
- 47.2 հա ոռոգման արդիական համակարգ
- 2 խելացի անասնաշենք
- 30 գլուխ ԽԵԿ
- 72 գյուղատնտեսական տեխնիկա
- 606.3 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 8091 մթերման պայմանագիր
- 288 ապահովագրական պայմանագիր

Վայոց ձորի մարզ
- 1191 միավոր վարկ՝ 1.9 մլրդ դրամ
- 32.5 հա ինտենսիվ այգի
- 5 գյուղատնտեսական տեխնիկա
- 29.4 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 69 մթերման պայմանագիր
- 14 ապահովագրական պայմանագիր

Սյունիքի մարզ
- 1986 միավոր վարկ՝ 3.8 մլրդ դրամ
- 10 հա ինտենսիվ այգի
- 15 գյուղատնտեսական տեխնիկա
- 176.7 մլն դրամի ագրոպարենային լիզինգ
- 28 մթերման պայմանագիր
- 27 ապահովագրական պայմանագիր